

ԵՐԱՆԱՇՆՈՐ

Տ. ԿԻՐԵՂ Բ. Ս. ՊԱՏՐԻԱՐԺ ԶՕՐ

ՏԱՐԵԼԻՑԻ ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏԸ

29 Հոկտեմբերի Կիրակիին կը զուգադիպէր Ս. Աթոռոյս երջանկայիշատակ Տ. Կիրեղ Բ. Ս. Պատրիարք Հօր մանուան տարելիցը: Հետեալք Գեր. Տեղապահ Հօր մասնաւոր կարգադրութեամբ Ս. Յակոբեանց Մայր Տաճարին մէջ մատուցուեցաւ տարելիցի հանդիսաւոր Ս. Պատարագը: Պատարագին էր Հոգ. Տ. Յարութիւն Վրդ. Մուշեան: Ժողովուրդի բոլոր խաւերը անխտիր լեցուցած էին Մայր Տաճարը, տարելիցի այս առիթով իրենց յարգանքի տուրքը բերելու մեծ նշնջեցեալի յիշատակին: Ներկայ էին նաեւ Մեծին Բրիտանիոյ Երուսաղէմի հիւպատոսը Սըր Հիւ Տաու իր քարտուղարին հետ, Երուսաղէմի երեք զխաւոր հայկական միութիւններու (Ե. Հայոց Բարեսիրական Միութիւն, Հայ Երիտասարդաց Միութիւն և Հ. Մ. Բ. Մ.) ներկայացուցիչները իրենց սկառաւական խումբերով միասին և Ս. Թ. Վարժարանի երկսեռ աշակերտութիւնը: Իսկ Լուսահոգւոյն զերեզմանին վրայ իրենց ծաղկեպսակները զետեղած էին՝ Ս. Յակոբեանց սղակիր Միաբանութիւնը, Ժառ. Վարժարանի և Ընծայարանի աշակերտութիւնը (զոյգ ծաղկեպսակ), Հանդուցեալ Սրբազան Հօր քոյրը, բարեկրօն Եղիսարեթ Սարկաւազուհի Տ. Մ. Իսրայէլեան (նոր-ջուղա), Ե. Հ. Բարեսիրական Միութիւնը, Հայ Երիտասարդաց Միութիւնը, Հ. Մ. Բ. Միութիւնը, Տեարք Յ. Թապուբեան և Պ. Հինդլեան, Mr. Geoffrey Taylor.

Հայր մերի պահուն խօսեցաւ Հոգ. Տ. Հայկազուն Վրդ. Աբրահամեան, ընթան ունենալով «Հովիւ քաջ զանձն իւր զնէ ի վերայ ոչխարաց», կուտանք իր քարոզին ամփոփումը:

... Աւետարանով ներկայացուած քաջ հովիւը Քրիստոս ինձն էր, որ իր նշանաւորութեամբ սարածելու համար ինձիմբ զոնց խաչին վրայ, եւ Գերեզման դասը եղաւ իմէ վերջ դաւերու քննմէջն ապրող մարդկութեան:

Այսօր կը լրանայ առաջին տարեկիցը մեր քաջ Հովապետին եւ Պատրիարքին, Հանգուցեալ Տ. Կիրեղ Արքեպիսկոպոսին: Համախմբուած ենք նորէն իր յիշատակին շուրջ այս սրբազան կամարներուն տակ, ուր դեռ իր քրքրան իր ձայնին ելեւեղներ, ուր դեռ կ'ապրին իր յիշատակները այս Հաստատութեան մէջ եւ մեր արեւուն խոր: Իրապէս Աւետարանով բացատրուած նշանաւորութեան է քաջ հովիւը մը եղաւ ան մանուանդ իր վերջին երկու տարեկներուն մէջ:

Մարդիկ եղած են պատմութեան մէջ, որոնց կեանքին ամբողջ գործունէութիւնը պատկուած է իրենց մէկ աւարտաւոր միայն, եւ մեր սիրեցեալ պատրիարքին վերջին երկու տարեկներու կրած առաւապները այս Արքեպիսկոպոսին: Իրապէս Աւետարանով բացատրուած նշանաւորութեան է քաջ հովիւը մը եղաւ ան մանուանդ իր վերջին երկու տարեկներուն մէջ:

մենք այլ ականատես վկաներ եղաւ անոր առաւապներուն այն սոսկալի օրերուն, երբ մենք ամէնքս ալ կ'ապրէինք անսոյց կեանքի մեր վերջին վայրկեանները, եւ Տ. Կիրեղ Պատրիարքի քաջութիւնն ու նշանաւորութիւնը խոր պատմութեան զինք ամէնքս: Մեր աղօթքներ իր հոգեւոր ի հանգիստ, յարգանքի պարզ տուրք մը չէ, այլ զերազմը պարտականութեան հասնուցում մըն է այլեւս:

Հանգիստ իր բարի հոգեւոր:



Յետ Ս. Պատարագի, զխաւորութեամբ Գեր. Տեղապահ Հօր, բովանդակ Միաբանութիւնը ըզգետաւորեալ, բոլորուցեան Լուսահոգի Սրբազանին զերեզմանին շուրջ Մայր Տաճարի գաւիթին մէջ, ուր կատարուեցաւ Հոգեհանգստեան տապաւորիչ արարողութիւն մը, ի ներկայութեան Մեծին Բրիտանիոյ Վսեմ հիւպատոսին, մեր վարժարաններու երկսեռ աշակերտութեան, Մատիւ Հ. Մ. Բ. Մ. և Հ. Ե. Մ. հայ արիւններու և Ժողովուրդի խումբ ըզգետնութեան մը խոնուած գաւիթին ու շրջապատի տանիքներու ծայրեղրին, որոնք լեցուն Աթոռանուէր և Ժողովրդասէր հայրապետին անուշ յիշատակովը լոյն երկիւղածութեամբ հետեւեցան սրտառու աղբիւրներ:

Հուսկ յետոյ Միաբանութիւն և Ժողովուրդ Թափօրական գնացքով և հանգստեան շարականներու երգեցողութեամբ բարձրացան պատրիարքարան ուր սուգի այս հանդէսը փակուեցաւ Գեր. Տեղապահ Հօր, մեծ հանգուցեալի յիշատակին ընծայուած յարգանքի կուռ խօսքերով ու օրհնութեամբ:

Երկնային խաղաղութիւն իր սրբաանեալ հոգիին և հանգիստ ցաւատանը իր մարմնոյն: